

Արձանագրություն № 5 (296)
ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի
2017 թ-ի հունվարի 30-ի նիստի

Գիտխորհրդի նիստը նախագահում էր ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը:

Ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 28 անդամներից 19-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

Օրակարգ.

1. ԵՊՀ-ի անվանական կրթաթոշակների հարցը:
2. Մանկավարժական պրակտիկային նախապատրաստվելու մասին:
3. Ուսումնական պլաններում փոփոխությունների մասին:

1. ԼՍԵՑԻՆ՝ 2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի համար անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Դեկան Պ. Բալայանը, պրոֆ. Լ. Մաթևոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը՝ որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ՝ վերահաստատել հետևյալ անձանց.

Պետրոսյան Տաթևիկ (մագիստրատուրա, 1-ին կուրս, /լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցում՝ ռուսաց լեզու/)՝ **Վ.Քոչարյանի անվան կրթաթոշակ.**

Գորգինյան Աննա (բակալավրիատի 4-րդ կուրս /ռուսաց լեզու և գրականություն/)՝ **Վ.Բրյուսովի անվան կրթաթոշակ:**

2. ԼՍԵՑԻՆ՝ Մանկավարժական պրակտիկային նախապատրաստվելու մասին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ ֆակուլտետի դեկանի տեղակալ Դ. Գազարովան:

Մանկավարժական պրակտիկան անց է կացվում 06.02.2017-ից մինչև 17.03.2017 առկա ուսուցման ուսանողների համար, և 20.02.2017-ից մինչև 17.03.2017՝ հեռակա ուսանողների համար: Պրակտիկան անցնում է ք.Երևանի դպրոցներում, հեռավոր շրջանների ուսանողների համար՝ ըստ բնակության վայրի: Փետրվարի 7-ին ժամը 12.30 կայանալու է մանկավարժական պրակտիկային վերաբերող կոնֆերանս:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հայտարարությունն ընդունելի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ՝ Ուսումնական պլաններում փոփոխությունների մասին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ Պ. Բալայանը տեղեկացրեց, որ բակալավրի ծրագրում փոփոխություններ են տեղի ունեցել: Մասնավորապես, պարտադիր առարկաների ցանկից դուրս է բերվում մանկավարժական բլոկը - հոգեբանություն, մանկավարժություն, մեթոդիկա: Այն գնահատվում է 30 կրեդիտ, և եթե ուսանողը ցանկանում է ստանալ մանկավարժի որակավորում, ապա նա պետք է լրացուցիչ վճարի դրա համար /1 կրեդիտը 5000 դրամ/ : Ազատված ժամերը մենք կբաշխենք հետևյալ առարկաների միջև. ձևաբանություն, շարահյուսություն, ռուս գրականություն, քանի որ թույլ չի տրվում փոխարինել դրանք նոր առարկաներով: Դա անդրադառնալու է ծանրաբեռնվածության վրա:

Գիտական խորհրդի նախագահ՝

Պ.Բ. ԲԱԼԱՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ